



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Քաղ. Երևան

29 հունվարի 2016 թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 1
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Թունյանի
Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի
Ա. Պետրոսյանի

Քննության առնելով Կիմ Մինասյանի անհատական դիմումի ընդունելիության
հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Կիմ Մինասյանը 2016թ. հունվարի 12-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 3, 28, 29, 60 (1-4-րդ մասեր), 71, 78, 79, 80 և 81-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածը:

Սույն անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց.

1.Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթով սահմանված չէ պատասխանատվության միջոցի կիրառման պարագայում տուգանքի նշանակման նվազագույն եւ առավելագույն սահմանաչափեր, որի պարագայում իրավակիրառողը կկարողանար կոնկրետ գործի հանգամանքներից ելնելով գնահատել կատարված զանցանքի որակավորման /վտանգավորության/ աստիճանը՝ կատարելով նույն օրենսգրքի 32-րդ /«Վարչական իրավախախտման համար տույժ նշանակելու ընդհանուր կանոնները»/, 33-րդ /«Վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները»/ եւ 34-րդ /«Վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքները»/ հոդվածների իրավաչափ պահանջները:

Ըստ դիմողի՝ վիճարկվող նորմում հստակության բացակայությունն առաջացնում է հավասարության եւ համաչափության սկզբունքների խախտում, քանի որ դրանք /խախտումները, զանցանքները/ իրենց էությանը, հանրային նշանակությամբ, հանրային վտանգավորության աստիճանով եւ հետեւանքներով նույնը չեն եւ լինում են էապես տարբերվող բնույթի:

2. Կիմ Մինասյանի անհատական դիմումի և դրան կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ առկա չեն դիմումի քննության ընդունումը մերժելու հիմքեր, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցը ենթակա է սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

3. Դիմողը միաժամանակ ներկայացրել է միջնորդություն իրեն պետական տուրքի վճարումից ազատելու մասին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «Կիմ Մինասյանի դիմումի հիման վրա՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

3. Բավարարել Կիմ Մինասյանի՝ պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ միջնորդությունը:

Նախագահող՝

Անդամներ՝

29 հունվարի 2016 թվականի

ՍԴԴԿՈ/1-2